Արձանագրություն 3

ՀՀ ՖՆ կարիքների համար ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-24/1 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 26.02.2024թ. ժամը 12:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Վ. Պողոսյան - ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության պետ

Հանձնաժողովի անդամներ

Ա. Մարտիրոսյան - ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության ֆինանսնատնտեսական բաժնի պետ,

Հ. Ղազարյան - ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության ֆինանատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ:

Գնումները համակարգող

Լ.Սահակյան՝ ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության գնումների բաժնի ավագ մասնագետ

1. **Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին**

1. «Ռիելթի մենեջմենթ քոմփանի» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել հայտում առկա անհամապատասխանությունները:
2. «Ռիելթի մենեջմենթ քոմփանի» ՍՊԸ-ի կողմից ստացվել է հաղորդագրություն, առ այն, որ վերջինս փետրվարի 22-ի հայտում առկա անհամապատասխանությունների շտկման մասին ծանուցումը ստանալուց հետո չի կարողացել սահմանված ժամկետում իրականացնել շտկումը՝ համակարգի անհասանելիության պատճառով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

2. Հանձնաժողովի կայացրած որոշումները

Հանձնաժողովը որոշեց.

1. Հարցում կատարել ՀՀ ֆինանսների նախարարություն՝«Ռիելթի մենեջմենթ քոմփանի» ՍՊԸ-ի՝ **ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-24/1** ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 23.02.2024թ. ժամանակահատվածի մասով, համակարգի հասանելիության վերաբերյալ:
2. Կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

3. **<u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը</u>**

ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-24/1 ծածկագրով ընթացակարգի գնահատման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել հարցման վերաբերյալ պարզաբանում ստանալուց հետո՝ ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի Նախագահ _____ **Վ. Պողոսյան**

Գնահատող հանձնաժողովի անդամներ՝ _____ **Ա.Մարտիրոսյան**

_____ **Հ. Ղազարյան**

Գնումները համակարգող՝ _____ **Լ.Սահակյան**